ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶ

ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ
ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ

1501, Ք. ՍԵՎԱՆ, ՆԱԻՐՅԱՆ 164 0261-4-00-01
24 / 08 / 2020թ.

2020թվականի օգոստոսի 24-ին Սևանի համայնքապետարանում տեղի ունեցավ Սևան համայնքի ավագանու թիվ 5 հերթական նիստը:

Նիստը վարում էր՝ համայնքի ղեկավար՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆԸ

քարտուղարում էր՝ աշխատակազմի քարտուղար՝ ԱՐՄԵՆՈՒՀԻ ՂՈՒԿԱՍՅԱՆԸ

Համայնքի ղեկավարի հրավերով ավագանու նիստին մասնակցում էին՝

Աշխատակազմի բաժինների պետեր՝ ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆԸ
ԷԴՎԱՐԴ ՂԱԶԱՐՅԱՆԸ

Աշխատակազմի մասնագետ

ԶԼՄ ներկայացուցիչներ

Համայնքի ավագանու նիստին ներկա էին ավագանու 11 անդամներ:

Բացակա էին՝

Մկրտիչ Մալխասյանը
Արսեն Սարգսյանը
Նորիկ Խալաֆյանը
Աշոտ Նադարյանը

ԼՍԵՑԻՆ՝

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ՝ 24.08.2020Թ. ԹԻՎ 5 ՀԵՐԹԱԿԱՆ ՆԻՍՏԻ ՕՐԱԿԱՐԳԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ. ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

Հաստատել համայնքի ավագանու՝ 24.08.2020թ. թիվ 5 հերթական նիստի հետևյալ օրակարգը՝

1. ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

2. ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ «ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

3. ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

3.1 ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ՝. ԷԴԻԿ ՂԱԶԱՐՅԱՆ /

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ՍԵՓԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՀԱՆԴԻՍԱՑՈՂ ՇԻՆՈՒԹՅՈՒՆԸ, ԴՐԱ ԶԲԱՂԵՑՐԱԾ ՈՒ ՍՊԱՍԱՐԿՄԱՆ ՀԱՄԱՐ ԱՆՀՐԱԺԵՇՏ ՀՈՂԱՏԱՐԱԾՔՆԵՐՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՀՀ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ «ԴԱՏԱԲԺՇԿԱԿԱՆ ԳԻՏԱԳՈՐԾՆԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ» ՊՈԱԿ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

- Որոշում թիվ 33-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 1-ին կետի 16)-րդ ենթակետի, 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ ենթակետի պահանջներով, հիմք ընդունելով ՀՀ ԱՆ նախարարի տեղակալի և ՀՀ ԱՆ «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի գրությունները, հաշվի առնելով, որ Սևան համայնքում և տարածաշրջանում կենդանի անձանց և դիակների դատաբժշկական փորձաքննություններ իրականացնելու, ինչպես նաև դիահերձման համար առկա չէ համապատասխան կառույց կամ մասնաշենք՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սևան համայնք, Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 1 հասցեում գտնվող 156.09քմ մակերեսով շինությունը, 5.59քմ մակերեսով աստիճանահարթակը և շինությունների զբաղեցրած 161.68քմ մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության և հասարակական կառուցապատման գործառական նշանակության հողատարածքը, անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին՝ Սևանի տարածաշրջանում կենդանի անձանց, դիակների դատաբժշկական փորձաքննություններ իրականացնելու և դիահերձման համար:
2. Սևան համայնք, Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 2 հասցեում գտնվող, Սևան համայնքի սեփականություն հանդիսացող 300.0քմ մակերեսով գյուղատնտեսական նշանակության նպատակային և այլ գործառնական նշանակության հողատարածքն անհատույց օգտագործման իրավունքով տրամադրել «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ին Կարմիր բանակի փողոց թիվ 66 / 1 հասցեում գտնվող շինությունների սպասարկման համար:

3. Կնքել անհատույց օգտագործման իրավունքի տրամադրման պայմանագիր՝ գործողության ժամկետը՝ մինչև «Դատաբժշկական գիտագործնական կենտրոն» ՊՈԱԿ-ի գործունեության ավարտը:
4. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
ՖՐԱՆՍԻԱՅԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻՆ ՆՎԻՐԱԲԵՐՎԱԾ ԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԸ «ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ԿՈՄՈՒՆԱԼ ՍՊԱՍԱՐԿՈՒՄ ԵՎ ԲԱՐԵԿԱՐԳՈՒՄ» ՀՈԱԿ-Ի ՀԱՇՎԵԿՇՌԻՆ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

/ ԶԵԿ.՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ /

- Որոշում թիվ 34-Ա

Ղեկավարվելով «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին կետի 21)-րդ ենթակետի պահանջներով ՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է՝

1. Սևան համայնքի և Ֆրանսիայի Գրենոբլ քաղաքի ապակենտրոնացված համագործակցության շրջանակներում Ֆրանսիայի Հանրապետությունից Սևան համայնքին նվիրաբերված IRLSBUS ILIADE մակնիշի 2004թվականի արտադրության երկու ավտոբուսն անհատույց օգտագործման իրավունքով հաշվեկշռից հաշվեկշիռ փոխանցել «Սևանի կոմունալ սպասարկում և բարեկարգում» ՀՈԱԿ-ին:
2. Ըստ ՀՀ ՊԵԿ-ի կողմից ներկայացված «ապրանքային հայտարարագրի»՝ յուրաքանչյուր ավտոբուսի մաքսային արժեքը 27.04.2020թ.դրությամբ կազմում է 6.511.625 /վեց միլիոն հինգ հարյուր տասնմեկ հազար վեց հարյուր քսանհինգ/ ՀՀ դրամ:
3. Սահմանել՝ ավտոբուսների օտարումն առանց մաքսային մարմինների և համայնքի ավագանու թույլտվության արգելվում է:
4. Ավտոբուսների նպատակային շահագործումը կարգավորվում է համայնքի ավագանու որոշմամբ:
5. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ԼՍԵՑԻՆ՝
ԴԻՄՈՒՄՆԵՐԻ ՔՆՆԱՐԿՈՒՄ

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՖԻԶԻԿԱԿԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԱՆՑ ՀՈՂԻ ՀԱՐԿԻ ԵՎ ԳՈՒՅՔԱՀԱՐԿԻ ԳԾՈՎ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ
/ ՁԵԿ՝. ԷԴԻԿ ՂԱՁԱՐՅԱՆ /

- Որոշում թիվ 35-Ա

Ղեկավարվելով ՀՀ Հարկային օրենսգրքի 230-րդ հոդվածի 3-րդ կետի, 245-րդ հոդվածի 2-րդ կետի պահանջներով, հիմք ընդունելով ֆիզիկական անձանց կողմից համայնքապետարան ներկայացրած դիմումները, մայր գումարների վճարման անդորրագրերի առկայությունը՝

ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆԻՆ Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Է՝

1. Ներքոհիշյալ անձանց համար սահմանել հողի հարկի և գույքահարկի արտոնություններ հետևյալ չափերով՝

ՀՈՂԻ ՀԱՐԿ դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Հողի գտնվելու հասցեն	Մայր գումար	Տույժ
1	Մարուս Թորոսյան	Նաիրյան 55		6099
2	Վահրամ Հովհաննիսյան	Ազատության 76		5657

ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ԱՆՁԻՆՔ

դրամներով

Հ/Հ	Անվանում	ՀՎՀՀ	Հողի հարկ /տույժ/	Գույքահարկ /տույժ/
1	«Վազգեն Մկրտչյան» ՓԲԸ	08600472	149275	117950
2	«Երևանի առագաստային ակումբ» ՀԿ	02581049		30604

ԳՈՒՅՔԱՀԱՐԿ ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՑ

դրամներով

Հ/Հ	Հարկատուի անուն, ազգանուն	Գույքի հասցեն	Մայր գումար	Տույժ զիջում
1	Հովհաննես Գրիգորյան	Ս.Սևանեցու 9 / 2-1		5543
2	Վահրամ Հովհաննիսյան	Ազատության 76		16401

2. Սույն որոշումն ուժի մեջ է՝ պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

<u>Որոշումը ավագանու անդամները հաստատեցին քվեարկությամբ.</u>

Կողմ -11 Դեմ -0 Ձեռնպահ -0

1. ԱՆՏՈՆՅԱՆ ԳՈՒՐԳԵՆ
2. ԱՎԱԳՅԱՆ ԿԱՄՈ
3. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԱՐՍԵՆ
4. ԱՎԵՏԻՍՅԱՆ ԲԱԳՐԱՏ
5. ԳԵՎՈՐԳՅԱՆ ԱՐԱՅԻԿ
6. ԴԱՎԹՅԱՆ ՌՈԼԱՆ
7. ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ ԱՐՄԱՆ
8. ՄԵԼՔՈՆՅԱՆ ԱՐԹՈՒՐ
9. ՍԱՂԱԹԵԼՅԱՆ ՎԱՀԵ
10. ՍԱՐԳՍՅԱՆ ՆԵԼՍՈՆ
11. ՎԱՐԴԱՆՅԱՆ ԷԴՎԱՐԴ

ՀԱՐՑ ՈՒ ՊԱՏԱՍԽԱՆ

Նիստի ընթացքում համայնքի ավագանիների կողմից բարձրացվեցին մի շարք հարցեր, հնչեցին առաջարկություններ: Համայնքի ավագանու անդամ Վահե Սաղաթելյանին հետաքրքրում էր, թե նախադպրոցական ուսումնական հաստատությունների վերաբացումից հետո ինչպես է կազմակերպվելու աշխատանքը:

Համայնքի ղեկավար Մուրադյանը նշեց, որ բացմանը կնախորդեն կազմակերպչական, տեխնիկական և անվտանգության հարցերին վերաբերող քննարկումներ:

Համայնքի ղեկավարը միաժամանակ տեղեկացրեց, որ չնայած մարտ ամսից ՀՈԱԿ-ները չեն գործում, սակայն աշխատակիցները ամբողջապես ստացել են աշխատավարձը, այս հարցում որևէ խնդիր չի առաջացել:

Ավագանու անդամ Կամո Ավագյանը, անդրադառնալով Ցամաքաբերդ-Գոմաձոր ճանապարհահատվածի կառուցմանը, մտահոգություն հայտնեց Գոմաձոր թաղամասի կոյուղագծերի վերաբերյալ, որոնք կարող են հետագայում դառնալ արդեն իսկ ասֆալտապատված ճանապարհի քանդման պատճառ: Ավագյանին հետարքրում էր նաև հիշյալ ճանապարհահատվածի արգելակների հարցը: Համաձայն նախագծի՝ նախատեսված է 4 արգելակի տեղադրում, որը բավարար չէ:

Համայնքի ղեկավարը նկատեց, որ ըստ անհրաժեշտության՝ նախագծում կկատարվեն փոփոխություններ, միաժամանակ նշեց, որ վերջին տարիներին դրանց թիվը բավականին ավելացել է:

Մյուս հարցը վերաբերում էր Գոմաձոր թաղամասի սելավատարին, որի վերաբերյալ ևս առաջիկայում կլինեն քննարկումներ: Ավագանու անդամ Ռոլան Դավթյանը մասնավորեցրեց Ցամաքաբերդ թաղամասի կոյուղագծերի հետ կապված հարցը, որն առաջնահերթություն է և թաղամասի համար ունի կարևորագույն նշանակություն: Այս խնդրի կարգավորման ևս նախատեսվում են քննարկումներ: Համայնքի ավագանու անդամ Արթուր Մելքոնյանը ևս մեկ անգամ անդրադարձ կատարեց թափառող շների խնդրին, որն այսօր դեռևս որևէ լուծում չի ստացել:

Համայնքի ղեկավարը նկատեց, որ բարձրացված խնդիրն առկա է ողջ հանրապետությունում, ներկայումս էլ ընթանում են քննարկումներ, կան նախնական պայմանավորվածություններ:

Սևանի մշակույթի տան հարցը ևս առաջնահերթություններից է, որին ևս մեկ անգամ անդրադարձ կատարեց Արթուր Մելքոնյանը: Արդեն իսկ համայնքապետարանի կողմից ուղարկվել է համապատասխան գրություն, համայնքի ղեկավարն ունեցել է հանդիպում: Առաջիկայում սպասվում է այս կարևորագույն հարցի լուծման ուղղությամբ որոշակի քայլերի իրականացում:

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ ՍԱՐԳԻՍ ՄՈՒՐԱԴՅԱՆ